ԼՐՈՅՑ ԹԻՒ

ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԷՐ. 15

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՓԵՏՐՎԱՐԻ 17։ ՈՐ Է ՌՃԼԷՎ ՐԱՄԱԶԱՆԻ ՀՎ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ։

ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Բարեփառ Յունկնակալն մեր ըստազանի 10 շաբթի օրը Սուլթան Պայազիտ եկաւ, և աղքատներուն ողորմութիւն բաշխելով Սերասքէրի դրան քովերը նոր շինված թուհաֆէներուն մեկին խանութը նստաւ։ և Սերասքէր փաշային հետը գրանցվելով հրաման ըրաւ որ հացմը բերէ։ և առաւ իր ժողովրդոց վրայ ունեցած խնամքը յայտնեց։ և իրիկվան մօտ Հէրաղան կոչված տպարանքը դարձաւ։

Նոյն գիշերը Ռ.ըքայական հրամանաւ Պայմագամ փաշային, և Սերասքէր փաշային, և Պափուտան փաշային, թագաւորին սենեկին կից եղեալ սենեակը (օտան)՝ Սրբքեաթիպի Մուստաֆայ էֆէնտիին հետ իֆտար ըրին։ և յետոյ գնացին Ռ.ըքային երկրպագութիւն մատուցին։ և ծանրագին գոհարներով զարդարեալ տուփեր (խութիներ) պարգև առին։

Ազարարդ նուէրներով տրված Լրոյ գրոյն մէջը գրված կերպովը, Հ՝ամ քաղաքը ասկէց յառաջ եղած պատահարէն յետոյ, այն երկիրը՝ նախկին Պ՝ոնեայի բդեշխ հաճի Ռ.լի փաշային տրվեցաւ։ և մինչև փաշային գալը քաղաքը կառավարելու համար՝ խափուճի պաշի Հիմմէթ աղային մուսելլիմ խրկվեցաւ։ Եւ Հ՝ամի բնակիչները որ այն պատահարին ժամանակը ըրած յանցանքներուն համար ներողութիւն կը խնդրեին, Ռ.ըքայական կողմանէ ներողութիւն տրվեցաւ։ Եւ քանիմը Ռ.ըքայական պատվերներ բերնով խօսելու համար անոնց, տերութիւն մեծամեծներէն թաւիխանայի առաջին նազիրներէն Ռ.հմէտ էֆէնտին խրկվեր էր։

Եւ հիմա Ռ.լի փաշայէն և Ռ.հմէտ էֆէնտիէն եկած թղթերէն յայտնի է։ որ փաշային անցնել շապանի 5 ին, և Ռ.հմէտ էֆէնտին ևս նոյն ամսոյ 8 Հ՝ամի քաղաքը հասեր են։ և Ռ.հմէտ էֆէնտիին տարած Ռ.ըքուանի հրովարտակը՝ Ռ.լի փաշային և ամէն խօսքի տեր եղողներուն և քաղաքացիներուն առջևը կարդացվեր է։ և ամենքն աղօթք և օրհնութիւն ըրերեն։ Ռ.ստա Ռ.ըքայական հրամանին կերպովը շարժելու, և հոգւով չափ ծառայութիւն կամքը կատարելու համար խոստացեր են։ և Ռ.ըքային ներողութիւն շնորհակալ ըլլալով իսլամ և մահկեր ըրեր են, և թագաւորեալ քաղաքը խրկեր են։ և այսպէս մուսելլիմ Հիմմէթ աղային գործը կատարվեր էր։ բայց խօսք հասկցող և խելացի մարդ ըլլալով, հաճի Ռ.լի փաշային իրէն քէհեայ ընելու համար խնդրվածք էր ըրեր։ և խնդրվածքը ընդունելի եղաւ։

Հ կոնտրացի Ս՝ուստաֆայ փաշային ընտանիքներուն և մերձաւորներուն և սպասաւորներուն նստած երկու նաւը, և մէջը դրրած անոր ապրանքները, Տիրա ձու նաւահանգիստէն բամազանէն քիչմը յառաջ Կոստանդնուպօլսի նաւահանգիստը հասան։ և առնց ամէնը Ս՝ուստաֆայ փաշային նստած բնակարանը տարին։

Եւ ապա հրամանատար խրրկրվեցաւ, եկող այր մարդիկներուն անունները սահմանեալ կարգադրուէ կերպովը՝ այն Թաղին (մահալլէին) տէֆթէրը գրեցին։ Եւ անոր հետ գոհարեղէնները, և ոսկեղէն և արծաթեղէն անօթները, և զէնքերը, և ուրիշ պատուական ապրանքները յատուկ տէֆթէր եղաւ, և Ա՝ղբայրին ցոյց տրրվեցաւ։

Եւ Ինքնակալն՝ այսչափ բարերարութիւնը վրայ՝ որ փաշային ըրած էր, այս շնորհն ալ ըրաւ։ և այն 3000 քսակէն աւելի եղած ապրանքը և ինչքը՝ ետ դարձուց և իրէն շնորհեց։ և այս կերպով ալ նոյն փաշայն նորէն ուրախացուց։

—

Ասկէց յառաջ տրպված Լրոյ գրին մէջը գրրվածին պէս, այս անգամ Ինկիլիզլի տէրուէ կողմանէ մեծ դեսպանուէ պատվով Թագաւորեալ քաղաքը եկող Դէանին, բամազանի մէջը հասաւ։ և առոր հանդիսաւորը պայրամէն յետոյ մնաց, ինչպէս որ մեծազօր տէրուէը սովորուին է։ միայն թէ Ա՝պարքոսին բերած նամակը տալու համար՝ բամազանի 5 ին երեք շաբաթի օրը փաշային դուռը եկաւ։

Պօղչա ատային մուհաֆըզ եղող՝ փաշայուէ ինկած և Կէլիպօլու նստած՝ Հաֆըզ ալի փաշային մեռնելը՝ Կէլիպօլուին դատաւորը գրով ծանուցեր էր։ և մեռնողին զաւակները յայտարարուի ըրբրեին՝ սարաֆին և ուրիշներուն պարտք ունենալը։ անոր համար տէրուէ սպասաւորներէն վերակացու դրվեցաւ, որ անոր ստացվածքը և ինչքը սովորուի եղած կերպովը գրեն, և ինչպէս կը հարկաւորի՝ այնպէս ընեն։

Այս բամազանի 10 ին շաբաթ օրը մայ բաքալաքին մէջը Գապասագալի թաղը Թադվիմի վրայի խանէն սրբագրիչ գոր սի զատէ՝ Մէմալէտատին էֆէնտիին տանը մէջ թոնիրը բռընկեցաւ։ միայն թէ իր կահնու կարասին և գրքերը այրեր է։ և ուրիշ տեղ չըդրպչելով մարեր է։

Եւ 13 ին՝ Խասըմ փաշայի մէջ՝ Փիսալէ փաշային մահալլէն թօփճի Խպրահիմին տունը՝ թաղարէն կրբակ պատահելով այրեր է։

ԳՈՐԾՈՒ ՕՐՄԱՑ

Ինքնակալին մերոյ բարեսրտուէը բարի յիշատակը եղած զօրաց կարգադրուէը՝ ամէն մարդկանց մեծին և փոքրին ունեցած փափագը՝ օգնուէ՞ այ օր ը՞ օրէ կաւելնայ։

Եւ այն կարգադրուէ մէջ գրանրվելը բոլոր քաղաքաց բնակիչները յիրաւի իրէնց պարծանքմը սեպելով՝ այժմ մեծազօր Ինքնակալութէ պաշտպանած երկրին մարդիկները՝ որոնց մէջը դեռ այս կարգադրութիւը չէ մտեր, անոնք ալ խընդրրվածք կընեն որ իրէնց մէջնալ մտնայ, և իրէնք ալ այս կարգին մէջը գրանրվին։

Ասոնց պէս ալ Կարկեդանի (Թարսուսի) երկրին բնակիչները փափագելով աղաչանք են ըրեր՝ որ իրէնց հին կարգը փոխվի, և այս գեղեցիկ նոր կարգադրութիւը հաստատվի։ և իրէնցմէ ասքերի մանուրի գրրվի, որ կրթուրթի սորվեցընեն և սորվին։

Եւ այս բանիս կատարմանը համար՝ Ա՝ղբայրին Կանոնագիր (Գանունnամէ), և զօրավարի և զօրականի և նրվագողներու (մուզիկաճիներու) հագուստներէն, և մուզիկայի և դրամիկ թայի թախմներէն, և զօրաց ուրիշ պիտոյքներէն՝ մէկ մէկ հատ օրինակի համար, և կրթեալ զօրքերուն և ռըմբաճիգներուն (թօփճիներուն) թալիմնամէները աղաչանքով խընդրեր են։

Ասոնց կատարեալ փափագը և աղաչանքը թունուզլի պէկլէրպէկի Հիւսէին փաշային կողմանէ ասկէց յառաջ ծանուցված էր, և ասոր համար պաշտէմիա Ս՝ուստաֆայ փէհլիվան աղան այս քաղաքը խրրկրված էր։ Եւ աղաչանքնին Ա՝ղբայրին յայ-

տարարուէ եղեր է։ ԵՒ ինչպէս խնդրված-ք ըրեր էին, այն կերպովը կատարվեր է։

Եւ փաշային պատիվը մեծցունելով, և ժողովրդէն փափագը աւելցնելու մտքով, Ք.ըբային կողմանէ Պաշուտան փաշային գիտութիւնը Պէկլերպէկիներուն յատկացեալ ոսկէթել փողպատով (սրբմա եախալը) կիւվեզ Հարվանի, և մէկ հատ նիշանի թուր, և կրթեալ զօրք գրելու հրամանատարութիւնը հրովարտակ՝ Պաշուտան փաշային տիվլեթտարին ձեռամբը խրկվվել, և պաշէմվան եւ դառնալ հրաման եղեր է։

Եւ Ք.ըբայական Հրովարտակին հետը Պայմադամ փաշային կողմանէ ևս գիր։ ԵՒ կարգաւորեալ զօրացը յատուկ եղեալ արքունի կանոնագիրը, և կերպ կերպ հագուստներէն օրինակի հմր մէկ մէկ հատ, և թալիմնամէներ, և թագաւորական պարգևները, Սերասքէր փաշային կողմանէ և Պաշուտան փաշային գրերովը, Տիվլեթտարին և պաշ հէմիային տրված-ն խրկվված է։

Եւ Ֆէսի բանը կարգաւորել զօրքերուն խիստ պիտանի ըլլալուն համար՝ քաղաքին մէջը գործ-ըվելու՝ յատուկ գործարան կատարված էր։ Սակայն պատվական և վայելուչ ըլալու, և գիւրին շինվելու համար, Թունուսի կողմն եղեալ Ճարտար վարպետներէն և գործաւորներէն վարպետներ և գործաւորներ խրկվելը ևս՝ հրաման և պատվեր եղած էր։

Այն Տիվլեթտարը իրէն յանձնարարութի եղած հրամանը կատարեր, և եղ դարձեր էր։ Եւ Թունուսի պէկլերպէկի Հիւսէյին փաշայն՝ Սերասքէրին ուղարկած գրերուն մէջը, իրէնց խնդրվածքը մեծափառ Ք.ըբային ընդունելի ըլլալուն, և իրէնց ասանկ Ք.ըբայական մեծ շնորհ ընելուն համար, ինքը՝ և երկրին բոլոր բնակիչները ուրախացեր են։ և կատարեալ ծառայութիւնին և սրտի մտոք հպատակութիւնին ցոյց տալով՝ վեհափառ Ինքնակալին աղօթք և օրհնութի ըրեր են։

Եւ սոյն փաշային իրէն, և իր զաւակներուն, և սպասաւորներուն, և իր բոլոր պարագաներուն հագուստները՝ կարգաւորեալ զօրաց հագուստին փոխարկելով՝ կարգաւորեալ զօրք գրելու և պատրաստելու վրայ եղեր է։ Դաւ կրթելը և կը թրվելը և ուրիշ կարգադրութիւնները՝ խրկվված Ք.ըբունական կանոնագրին կերպովը կատարում տալու հետևեր է։

Եւ այն կողմին բնակիչները՝ զարգարուն և ոսկէթել սովորական հագուստներ նին ետ ձրգելով, կարգաւորեալ զօրաց հագուստը հագնելու և զօրք գրվելու համար՝ մէկ մէկու եաւէ էկող խիստ շատ եղեր են։ սակայն ասոնց մէջերէն երիտասարդ և կարիճ և Ք.ըբունական կանոնագրին կերպովը զօրական ըլլալու արժանի եղողները ընդունվեր են։ Եւ այս կերպ մարդիկներէն քիչ ժամանակի մէջ գրվողները վեց հազարէն աւելի եղեր են։

Եւ այս գրվված զօրքերէն՝ թագաւորական քաղաքին մէջը կրթուէ կերպը տղէկ սորվելու, և այն կողմերը ևս սորվեցնելու համար՝ գօլ աղասի Դիւմանն աղային հետը մէկ գունդ զօրական խրկվեր է։

Եւ Ֆէսի վարպետներէն հրաման եղաւ ինչ վարպետ և գործաւոր խրկվեր է։ և ասոնց յայտարարութէ գրերը՝ Ք.ըբային տրվեր է։ Եւ Սերասքէր փաշային խընդրվածքին կերպովը՝ Թունուսէն եկած զօրականներուն կրթուելը ինքն խնամով նայելու համար՝ Սերասքէրին դուռը կենալու։ և շապանի ամանակը, թագաւորական քաղաքը կեցած բոլոր ժամանակին ամանականները, ապքէրի մանսուրէի զօրավարներուն և զօրականներուն տրվված ամանականներուն և ռոճիկներուն (թայինաթներուն) համեմատ՝ ամանակ և ռոճիկ բաշխելու։ և այս պայրամին կարգաւորել զօրքերուն տրվելու հագուստին պէս հագուստ տրվելու։ և Թունուսի Հիւսէյին փաշային ջանքը ընդունելի ըլլալուն համար՝ մեծարանաց թղթեր գրվելու։ և Ֆէսի վարպետները ևս՝ Ֆէսի գործարանները դրվելու, մեծազօր Ք.ըբայէն հրաման եկեր է։ Եւ նոյն զօրականները կրթուէ համար Սերասքէրին դուռը պահելով՝ կը թուէ կերպը սորվեցնելու, և Ֆէսի վարպետներնալ գործարաններուն նաղարին խրկվելով՝ ջանացողութի եղեր է։

Մնականով եղած ձիաւոր ոստիկանի մեն սուրբին հանդէսներէն՝ միրալայ Մուհամմէտ ալի պէկին կառավարութեան տակը եղած՝ Ֆիլիպէ կեցող վեցերորդ ալայ պէկին ևս թագաւորական քաղաքը գալու՝ Մարգայէն հրաման եղեր է. և արդեն հը բովարտակը, և Սէրասքէրին կողմանէ պատ վերանագիրը՝ 'ի միասին խրկրկված է։

—

Շապան ամսոյ մէջը՝ արքունի սեպ հական զօրաց հիւանդանոցը՝ 320 զօրակա մնած է. 382 զօրական ելեր է. միայն 7 հոգի մեռեր է։

Լուսկիւտարը արքունի սեպհական զօրաց հիւանդանոցը՝ 157 զօրական մնած է. 170 զօրական ելեր է. միայն 1 հոգի մեռեր է։

Մարդերի մանսուրէի հիւանդանոցը՝ 200 զօրական մնած է. 270 հիւանդ առողջացեր է. միայն 10 հոգի մեռեր է։

Միւհիմմաթի հարպիէի հիւանդանոցը՝ 89 զօրական մնած է. 109 զօրական ելեր է. միայն 9 հոգի մեռեր է։

Թերսխանէին հիւանդանոցը՝ 476 հիւանդ մնած է. 490 ողջացեր է. և ժամանակէմը 'ի վեր ախտաւոր հին հիւանդներ շատ ըլլալով միայն 57 հոգի մեռեր է։

Թոփխանայի հիւանդանոցը՝ 130 զօրական մնած է. 106 զօրական ելեր է. միայն 2 հոգի մեռեր է։

Եւ այս ամէնը՝ հիւանդանոցներէն եկած ախտաժէտաց համարներն (տէֆթէրին) մէջէն յայտնի ըլլալը, արքունի բժշկապետին ուղարկած և իր կնքովը կնքած ցուցակներուն մէջը գրված է։

ԴՈՒՐՆՈՒ ԱՐՏԱՐԻՆ

—

Պրաղանս ըսված Եւրոպայի արքայազուն պատուաւոր ցեղէն սերեալ Տօնփեթրօ անուն փորթուկէզի թագաւորը, ապրեց 16 և 17 տարի յառաջ՝ երբ որ Պոնապարթէն Սպանիայու երկիրը տիրեց, և անոր ատենամակից փորթուկէզի երկիրը ոչիսի անցներ, փորթուկէզի թագաւորը իր տեղը փոխարքայ դնելով Մէրիգայ Պրազիլ ըսված ընդարձակ երկիրը գնացեր էր, որ աներկիւղ և ապահով ըլլայ։ Եւ կատակագիր ըրած էր, թէ որ ինքն հոն մեռնելու ըլլայ, կամ թէ ետ դառնալ չը կարողանայ, փոքր աղջիկը երբ որ չափահաս ըլլայ՝ փորթուկէզի թագաւորութիւնը ժառանգէ. բայց մինչև չափահաս ըլլալու ատենը՝ Մէքայէլ անուն իր եղբայրը երկրին օրէնքին և սովորութեան կերպովը տերութիւնը կառավարէ։

Եւ այս Մէքայէլն ալ քանիմը տարի յառաջ՝ երբ Պէչ քաղաքին մէջը հիւրի պէս կը կենար, այս թագաւորին աղջկանը հետ պսակվել կուզեր. այս պայմանովը՝ որ նոյն աղջիկը թագաւորութիւնը ժառանգ ըլլայ, և ինքն միայն անոր այր՝ կամ հասարակ մարձաւորմը ըլլայ. և ասանկ խոստացեր, և ուխտ և դաշինք ըրած էր։

Բայց երբ ինքը փորթուկէզի երկիրը գնաց փոխարքայ նստաւ, և երկրին բոլոր կառավարութիւնը ձեռքը առաւ. ազգին մէջը երկպառակութիւն ձգելով թագաւորական թագը իր գլխուն յարմարած էր. և իր հօրեղբօրը՝ Տօնփեթրօ արքային զօրացը դէմ դնելու չափ՝ զօրք հանելու ձեռնհաս եղած էր. և սահմանակից Սպանիայու թագաւորին հետը դաշնադրութիւն ընելով պէտք եղած ատենը անկէ օգնութիւն առնելու կերպն ալ կարգադրած էր։

Իսկ փորթուկէզի թագաւորը Տօնփեթրօն՝ այս տարի Մէրիգայէն Եւրոպայ դարձեր է. և Ֆրանսայի և Անկլիայի տերութեց հիւր եղեր է. և հոն իրէն վայելուչ պատիվը ունի. սակայն փորթուկէզի մէջը եղած իր եղբայրին հետ պատերազմելու ըլլայ, ընտանեաց մէջը եղած ասանկ կռուիլներուն ուրիշ տերութիւնները օգնութիւն տալ միտք չունին. բայց եթէ ասոնց հակառակուելը երկարի, և մեկզմեկու հետ պատերազմ ընել հարկաւորի, Անկիլիզի տերութիւն մեկ քանի պատերազմնական նաւերը փորթուկէզի երկիրը խրկրկվելով՝ անոնց կըռիվը վերջացնելու դիւրին կերպմը ըլլալը, Եւրոպայէն եկած թղթերուն մէջը գրված է։